սէյն աղէն։—«Այո՝,—պատասխանեցի՝,—Հայերը արիւնհեղութիւն չեն ցանկանում։ Նոքա կամենում են իւրեանց թշնամիներին յաղթել գթութիւն հայցելով զօրեղ պետութիւններից և գրելով և խօսելով։ Այդ տեսակ կռուին կուլտուրական կռիւ են անուանում։

Հիւսէյին աղէն սաստիկ տխրեց։—«Առաջին անգամն եմ լսում՝ ասում էր նա՝,—այդ ձեր կուլտուրական կոչուած կռուի տեսակը՝ որ ձեր ասելով՝ առանց զէնքերի է կատարվում։ Դրան իմ խելքս բոլորովին չէ հասնում՝ թէ առանց արիւնի և զէնքի գործ առաջ գնայ՝ յաղթութիւն լինի։ Այդ կուլտուրական կռիւը ես ուրիշ տեսակ եմ հասկանում։ դա նշանակում է՝ որ հայերը իւրեանց կաշուց սաստիկ վախենում են և չեն ուզում նրան ծակծկվելու վտանգի տակը դնել։ Նոյնպէս մեծ նշանակութիւն են տալիս քսակներին և չեն ուզում նրանց բերանը բաց անել։—«Դուք սխալվում էք՝ խան՝,—ասացի։—այն ազգը որ ռուսաց բանակին անպակաս տվել է հերոսական զօրավարներ՝ տաղանդաւոր ասպետներ՝ քաջ զինուորներ՝ այդպիսի մի ազգ իւր կաշու ծակծկվելից չի վախենալ։ Այն ազգը՝ որ անցեալում շինել է անհամար եկեղեցիներ՝ ներկայումս շինում է ուսումնարաններ՝ կազմում է բարեգործական ընկերութիւններ։ Սովի տարին ստոյգ մահից ազատեց իւր կարօտ դա-